մտադիր չէ քայլեր անել նախկին ռուս-տաճկական սահմանները անցնելու համար: Նամանաւանդ, նա իրաւունք ունի յուսալ, որ Տաճկաստանը չպիտի միջամտի այն հարցերին, որոնք վերաբերում են Հայաստանի ներքին գործերին և այս տեսակէտից Ձեր պահանջը Օլթիի շրջանը, որը կազմում է Հայաստանի Հանրապետութեան անվիճելի մասը, հայկական գօրամասերից մաքրելու մասին և յիշեալ շրջանում ձեր ասկեարների յարձակողական շարժումները բոլորովին անընդունելի և անթոյլատրելի են:

Հաւատարիմ իր խաղաղասիրութեան՝ հայ ազգը պատրաստ է երկարացնել բարեկամութեան ձեռք ամէն այն ազգին, որը՝ իր կողմից ճանաչում է լիովին նրա պատմական, ազգագրական, պետական օրինական իրաւունքները և ուրիշ ազգերի նրա հանդէպ ունեցած վերաբերումից կախուած է հայ ազգի վերաբերումը դէպի այն վերջինները:

Ընդունեցէ՛ք յարգանաց հաւաստիքը:

Արտաքին Գործերի Քարտուղար՝ Տէր Յակոբեան.

28 յուլիսի 1919 թ. № 4515»:

Հայ-վրացական խորհրդաժողովը շարունակում է իր աշխատանքները: Արդէն կնքուել է դատական պայմանագիրը: Ազատօրէն զէնք փոխադրելու երաշխիքը ստացած է: Բայց տերիտորիալ հարցերի վերաբերմամբ մեր դրացին շատ մեծ ախորժակներ ունի. նա պահանջում է մինչև անգամ Սանահինը, Արդահանը, Օլթին (բացականչութիւններ ու ծիծաղ տեղերից): Մենք յոյսեր ունենք, որ մեր բանակցութիւնները Վրաստանի հետ յաջողութեամբ կը վերջանան և դարերի բարեկամները և միատեսակ կուլտուրա, միատեսակ թշնամիներ ունեցող ժողովուրդներն իրար կը հասկանան: Ես ունեմ այդ հաւատը և կարծում եմ, որ նոյնը պիտի լինի նաև Վրաստանի կառավարութեան և ժողովրդի մէջ:

Պարսկաստանի հետ ամենամտերիմ և բարեկամական կապն է պահպանել: Մենք մեր դիւանագիտական ներկայացուցչից կտրուած ենք եղել և միայն շատ հեռաւոր ճանապարհներով ենք կարողացել կապ պահպանել: Մեր դիւանագիտական ներկայացուցիչը բանակցութիւններ է վարել դաշն կապելու Պարսկաստանի հետ, որ մօտ օրերս կը ստորագրուի: Մի քանի օրից մենք կապ կը հաստատենք Պարսկաստանի հետ Ջուլֆայի վրայով (աղմկալից և երկարատև ծափեր):

Եւրոպայից մենք ստացանք իրական օժանդակութիւն, որի համար մենք արտայայտում ենք մեր երախտագիտութիւնը: Զէզոք պետութիւնները, Շվէյցարիան և Սկանդինաւեան պետութիւնները մեծ ուշադրութիւն են դարձնում մեր հանրապետութեան վրա: Նրանք հինգ տարով բաց են անում մեզ խոշոր վարկեր, մեծ քանակութեամբ մթերքներ, կենդանիներ, գործիքներ, տրանսպորտի միջոցներ գնելու համար: Այդ վարկերի բացումը յաջողացրել է մեր արտաքսահմանեան պատուիրակութիւնը:

Խորհրդային Ռուսաստանը, թէև պատրաստակամութիւն յայտնեց մեզ հետ բանակցելու և խօսքերով շատ «բարեացակամ» տրամադրուած ցոյց տուեց դէպի մեզ, բայց գործով և իրականում նա ոչ մի բանով չի տարբերւում Ադրբէջանից: Ըստ երևոյթին, բարեացակամ վերաբերմունքի մենք կը հանդիպենք միայն մեր գօրքի միջոցով (աղմկալից ծափեր):

Ադրբէջանում, ուր կայ սարսափելի հալածանք հայ տարրի դէմ, մասնաւորապէս դաշնակցականների հանդէպ, բանտարկուած են մօտ 2500 հոգի, որոնք ենթակայ են ամէն տեսակ բռնութիւնների ու դաժանութիւն-